

ԱՌԱՑ ԴԱԻԱՆԱՆՔԻ

Ժամանակակից վէպ Հէնրիկ Սենկեիչի

Թարգմ. 8. ՅՈՎՃԱՆՆԻՍԵԱՆԻ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

(Նաբռւնակութիւն¹⁾)

Հռոմ, 12 լունւարին:

Երեկ զբելիս ես դրգուած դրութեան մէջ էի: Բայց ինձ թւում
է, որ ես շօշափեցի թէ իմ և թէ ընդհանուր մարդկային հոգու
վերքը: Վինում են բոպէներ, երբ ես անտարքերութեամբ եմ վե-
րաբերւում ազդպիսի հարցերի, բայց երբեմն նրանք ինձ անդժա-
րար տանջում են, մանաւանդ որ իմ մէջ են ծածկւած այդ հար-
ցերը: Գուցէ լաւ կը լինէր չը մտածել այդ հարցերի մասին, բայց
նրանք վերին աստիճանի կարևոր հարցեր են... իսկ մարդս անպատ-
ճառ ուզում է իմանալ, թէ ինչ է սպասում իրան և թէ ինքը
ինչպէս պէտք է կարգի դնի իւր կեանքը: Ես շատ անզամ եմ փոր-
ձել՝ ասել վերջապէս ինքս ինձ,— բաւական է, այդ կախարդւած
շրջանից դուրս չես կարող գալ, լաւ է սկի չը մտներ մէջը: Ես ինձ
կուշտ և ուրախ գաղան դարձնելու համար բաւականաչափ կարողու-

1) Տե՛ս «Մուբե» № 1.

թիւն ունեմ, բայց ես չեմ կարող ընդ միշտ բաւականանալ զրանով։ Ասում են, որ պատմնների բնութեան մէջ մի քիչ հակումն կայ դէսի միտոիկականութիւն։ Ես նկատել եմ, օրինակ, որ մեր բոլոր մեծ զրողները իրանց կեանքի վերջին տարբները միտոիկ են դառնում։ Ել ինչու պէտք է զարմանալ, որ երբեմն-երբեմն սովորական մարդիկն ել են մի քիչ տանջչում ևսկ զարով ինձ, ես պէտք է զրէի իմ ներքին վրդովմունքների մասին՝ հոգուս պատակերը պարզ գուրս բերելու համար։ Բայցի այդ՝ մարդ երբեմն պահանջ է զգում ինքն իւր առաջ արդարանալու։ Օրինակ՝ ես, այդ անվերջ ևը գիտեմնը հոգում, պահում եմ կրօնի պատւիրանները և ինձ կեղծաւոր չեմ համարում։ Կեղծաւորութիւն կը լինէր իմ կողմից, եթէ որ ես չը գիտեմնի փոխարէն կարողանալի ասել՝ «գիտեմ, որ ոչինչ չը կար»։ Բայց մեր սկիբալութիւնը՝ բացարձակ բացասութիւն չէ, այլ աւելի՝ մի տեսակ ցաւոտ ու հոգեմաշ կասկած է, թէ զուցէ ոչինչ չը կայ։ այդ՝ մի թանձր մշուշ է, որ պատել է մեր զլուկը, ճնշում է մեր կուրծքը և ծածկում է լոյսը մեր աչքից։ Ես մեկնում եմ ձեռներս դէսի արեգակը, որ զուցէ լոյս է տալիս այդ մշուշից դէնը։ Եւ կարծում եմ, որ միմիայն ես չեմ այդ զրութեան մէջ գտնում և որ կիւրակէ օրերը պատարագ զնացողներից շատերի, շատ շատերի աղօթքը կարելի է երեք խօսքով արտացանել՝ «Ասուած, փարատիր խաւարը»։

Չեմ կարողանում այսպիսի բաների մասին ստոնասիրտ գրել։ Կրօնական կանոնները ես պահում եմ նոյնպէս և այն պատճառով, որ սաստիկ փափագ ունիմ հաւատալու.... Այն վարդապետութիւնը, որով ես դաստիարակւել եմ, ողորմածութիւնը հաւատի անհրաժեշտ պայմանն է համարում։—և ես սպասում եմ ողորմածութեան։ Սպասում եմ, որ մէկը ինձ շնորհի այնպիսի հոգեկան դրութիւն, որ ես կարողանամ հաւատալ առանց կասկածանքի ամենաչնչին նշոյի, հաւատալ այնպիսի խորին հաւատով ինչպէս հաւատում էի երեխայ ժամանակս։ Ինձ ղեկավարում են ազնիւ դրդումներ։ այդ դրդումների մէջ վաս բանի նշոյլ անգամ չը կայ, ընդհակառակը՝ ինձ աւելի ձեռնոտու կը լինէր կուշա ու ուրախ գաղսն լինել։

Բայց եթէ ինձ պէտք լինէր իմ արտաքին բարեպաշտութիւնը արդարացնել ոչ այդքան ազնիւ ու աւելի գործնական նկատումնե-

րով, ազդպիսի նկատութեր էլ բաւական կարող էի առաջ բերել։ Մի քանի պարտականութիւններ կան, որոնց կառարելը ինձ համար սովորութիւն է դարձել. ինչպէս Հանրի IV-ը ասում էր, թէ Պարիզը արժի մի պատարագ, այնպէս էլ ես ինքս ինձ ասում եմ՝ ուրիշների հանգստութիւնը արժի մի պատարագ։ Իմ հասարակութեանը պատկանող մարդիկ ընդհանրապէս կատարում են կրօնի պահանջած ծէսերը, իսկ իմ խիզնս միայն այն ժամանակ կարող կը լինէր որ և է բողոք յայտնել, եթէ որ ես կարողանացի ինքս ինձ չը գիտեմ-ից աւելի վճռողական մի բան ասել։ Վերջապէս՝ ես եկեղեցի եմ զնում, որովհետեւ ես քառակուսի աստիճանի հասցրած սկեպտիկ եմ, որ կը նշանակի, թէ ես մինչև անգամ իմ սեպհական սկեպտիկականութեանս էլ սկեպտիկաբար եմ վերաբերում։

Հէնց այդ է վատը։ Իմ հոգին իւր մի թելք քաշ է տալիս զետնահանց։

Դրութիւնս աւելի դառը կը լինէր, եթէ որ ես միշտ այդ հարցերին այնպէս զգայուն սրտով վերաբերեցի, ինչպէս վերջին անգամ ինքս ինձ խոստովանութիւն անելիս էի վերաբերուում։ Իմ բախտիցս, այլպէս չէ Խնչպէս արդէն ասել եմ, պարբերաբար ինձ վրաց անտարբերութիւն է զալիս ժամանակ առ ժամանակ կեանքը ինձ առնում է իւր զիրկը և թէս ես այնուամենայնիւ չեմ մոռանում, թէ ինչ արժէք ունին նրա բոլոր քաղցրութիւնները, բայց էլի ոտով-զիտով անձնատուր եմ լինում նրան, և այն ժամանակ բարոյական տօ Եօ Օօ Տօ Եօ Եարցը (լինել թէ չը լինել) ինձ համար ոչ մի նշանակութիւն չի ունենում։ Տարօրինակ երեսով է և մինչև այժմ քիչ ուսումնասիրւած, թէ որ քան սաստիկ կերպով է ներգործում այդ դէպքում շրջապատող միջավայրի (օրեդա) բռնակալութիւնը։ Որինակ՝ Պարիզում ես աւելի հանգիստ էի լինում և դրա պատճառը միայն այն չէր, որ ինձ խլացնում էր ջաղացի անիւների զդրոցը, որ ես ինքս էլ եռ էի զալիս այդ եռման ջրի մէջ, որ և վարժութեան ժամերը ոչ սրտումն, ոչ էլ գլխումն ուրիշ բանի համար տեղ չէին թողնում. ոչ, այնուեղ մարդիկ, գուցէ անգիտակցորար, այնպէս են ապրում, կարծես թէ ամենքն էլ հաւատացած են, որ մարդ պէտք է իւր բոլոր ոյժերը նւիրի կեանքին, որովհետեւ կեսանքից յեաոյ միայն քիմիական պրոցեսներ են լինելու։ Այսաեղ

իմ երակազարկն էլ սկսում է բարախել հասարակական երակազարկի հետ միասին ու ես էլ տրամադրում եմ ընդհանուր տրամադրութեան համապատասխան։ Ուրախանում եմ թէ տիրում, ծեծում և թէ ծեծում, արտաքուստ ես հանդիսա եմ լինում։

Հոռմ, Բարուինո փողոց, 13 լունարի։

Մինչեւ այստեղից հեռանալս չորս օր է մնում։ ուղում եմ գնալուց առաջ ի մի ամփոփել իմ մասին ասածներս։ Ես՝ մի քիչ յոդնած, սասարիկ տպաւորուղ և ջղալին մարդ եմ։ Արտաքին կրթութիւնից սաստիացած ինքնամանաչութիւնս այնքան բարձր է, որ առհասարակ ես ինձ կարող եմ մտա, որապէս զարգացած մարդ համարել։

Ակեպտիկականութիւնս, —քառակուսի դարձրած սկեպտիկականութիւնս չի թողնում, որ իմ մէջ որ և է անյողգողդ համոզմունք մնայ։ Ես նայում եմ, դիտում եմ, երբեմն-երբեմն ինձ թւում է, որ ես ըստում եմ իրերի էութիւնը, բայց վերջ ի վերջոյ այդ էլ է ինձ կասկածելի թւում։ Ասացի արդէն, թէ ինչպէս եմ վերաբերում կրօնին։ Գալով քաղաքական հայեացքներիս՝ ես պահպանողական եմ, որքան որ իմ դրութեան մէջ զանողը կարող է պահպանողական լինել և որքան պահպանողականութիւնը բաւարարութիւն է տալիս իմ ճաշակին։ Աւելորդ է ասել, թէ որքան տարբեր է այդ տեսակ պահպանողականութիւնը այն հայեացքից, որով անշարժութիւնը մի տեսակ դաւանակքի նման բան է, որին մինչեւ անդամ չի կարելի կրիտիկաբար վերաբերել։ Ես այնքան քաղաքակրթւած մարդ եմ, որ չեմ կարող անպայման կերպով արիստոկրատիացի կողմն անցնել։ Այդ տեսակ խաղալիքներով դրաւում են յետ ընկած, խուլ անկիւններում կամ այնպիսի հեռաւոր երկիրներում, ուր դաղափարները մոդալի պէս մի քանի տարով ուշ են հասնում։ Ես սիրում եմ զգայուն ջղերի տէր, զարգացած մարդկանց և վնասում եմ նրանց այնուեղ, որուղ աւելի հեշո կարելի է նրանց գտնել։ Ես սիրում նրանց այնպէս, ինչպէս սիրում եմ դեղաբեստի արտադրութիւնները, գեղեցիկ աեսարանները, սիրուն կանանց։ Իմ էսթետիկական դիւրազգայութիւն, ինչքան գւարձու-

թիւն է պարզեռում ինձ, այնքան էլ տհաճութիւն է պատճառում, բայց և միշտ մասուցել է ու մասուցանում է ինձ մի մեծ ծառայութիւն, — նա ինձ պահպանում է ցինիկականութիւնից, այսինքն կատարելապէս փչանալուց և առ այժմ ինձ համար բարողական սկզբունքների տեղն է բռնում: Մի քանի յանցանքները ես չեմ կարող անել ոչ այն պատճառով որ այդ յանցանքները չարիք կը համարէի, այլ նրա համար, որ զգւելս կը դար նրանց անճոռնի արտաքին աեսքից:

Ըսդհանրապէս ինձ թւում է, որ ես՝ գուցէ և մի քիչ փշացած, բայց կարդին մարդ եմ կամ աւելի ճիշտ ասած առ այժմ օդի մէջ կախ ընկած, ոչ մի - ոչ կրօնական, ոչ էլ հասարակական — դաւանանքի վրայ չը յենաղ մարդ եմ: Ես ոչ մի նպատակ չ'ունեմ, որին կարողանացի նւիրել կեանքս, և դրանից է, որ այսպէս վասեմ զում ինձ:

Վերջացնելով մի քանի խօսք էլ ասեմ ընդունակութիւններիս մասին: Հայրս, հօրաքոյրս, ընկերներս, մասամբ էլ՝ նոյնպէս և կողմնակի մարդիկ ինձ համարեա չը տեսնած ընդունակութիւնների տէր են համարում: Ես ինքս խոստովանուում եմ, որ իմ խելքս զուրկ չէ փայլից: Բայց «improductivité slave»-ը ի դերեւ չ' հանելու ինձ վրայ գրդող բոլոր յոյսերը: Ի նկատի առնելով այն բոլորը, որ ես արել եմ մինչեւ այժմ կամ, աւելի ճիշտ ասած, որ ոչինչ չեմ արել ոչ միայն ուրիշների, այլ և ինձ համար, ես ստիպւած եմ ենթադրել, որ հենց այդպէս էլ կը լինի ապագայում:

Խակ այդ գիտակցութիւնը աւելի ցաւ է պատճառում ինձ քան թւում է առաջին անգամից: Խմ հեզնութիւնս, ինքս իմ մասին մտածելիս, դառն հեղնութիւն է լինում: Այն հոգի մէջ, որից Ասուած ստեղծել է Պոշովսկիներին, մի տեսակ անպտղութեան խառնուրդ կայ, որովհետև նրա վրայ ամեն բան շատ շուտով ու շատ փարթամ կերպով է ծլում և ոչ մի բան պտուղ չի տալիս Նթէ ես այդպէս անպտուղ տեղովս իսկապէս հանճարաւոր ընդունակութիւններ ունենացի, հետաքրքրական օրինակ կը լինէի նոր տեսակ հանճարի, — անպրտֆէլ հանճարի այնպէս, ինչպէս որ կան անպրտֆէլ մինիստրներ:

Այդ՝ «անպրտֆէլ հանճար» սահմանաբանութիւնը ինձ ճիշտ

է թւում: Հարկաւոր կը լինի արտօնութիւն վերցնել այդ գիւտի համար: Ի հարկէ: չէ որ բացի ինձնից շատերը, անշուշտ շատերը կը կրեն այդ մականունը: Խնձպէսների թիւը լեզեն է: «L'improductirité slave»-ը կարող է մնալ ինքնըստինքեան, անսպառվէլլ հանձարն էլ ինքնըստինքեան,—այդ մեր զուու լեհական պտուղն է: Դարձեալ կրկնում եմ:—ինձպէսների թիւը լեզեն է: Ես չը գիտեմ աշխարհիս երեսին բացի մեր երկրից մի ուրիշ անկիւն, ուր այնքան փայլուն ընդունակութիւններ զուր կորչելիս լինեն, ուր մինչեւ անգամ արդիւնք տուղներ քիչ, այնքան անսասելի քիչ: արդիւնք տալիս լինեն Աստծուց իրանց ստացած շնորհների համեմատութեամբ, որքան որ մեզում են կորչում ու որքան քիչ արդիւնք որ մեր երկրումն են տալիս:

Հոռոմ, Բարուինո փողոց, 14 լունարի:

Հօրաքոյրս կրկին նամակ է գրել, սաստիկ խնդրում—պահանջում է, որ շուտ գնամ: Գալիս եմ, սիրելիս, գալիս, և Աստծուն է յայտնի՝ այդ միմիայն քո սիրուն եմ անում: թէ չէ ես աւելի լաւ կը համարէի այստեղ մնալ: Հայրս տկար է, վերջին ժամանակներս մարմնի ձախ կողմը սկսել է թուլանալ: Ես շատ խնդրեցի, բժիշկ հրաւիրեց, բայց հաւատացած եմ, որ բժշկի դրած դեղը կը դնի պահարանը, կը կողակի՝ ինչպէս միշտ արել է: Մի օր նա բաց արեց պահարանը և, ցոյց տալով հարիւրաւոր շիշեր, սրւակներ ու տուփեր, ասաց ինձ:—«Այս բոլորը որ առողջ մարդ ուտէր ու խմէր՝ չէր դիմանալ, ուր մնաց՝ հիւանդը»: Մինչեւ այժմ բժշկութեան վրայ այդպիսի հայեացք ունենալը վաստ հետևակը չի հասցրել հօրս, բայց ապագայի համար սիրտներս անհանգիստ է լինում:

Միւս պատճառը, որ ես չեմ ուզում գնալ, հօրաքրոջս դիտումներն են: Նաու բնական է, որ նա ուզում է ինձ պահել: Չը գիտեմ՝ արդեօք ինկատի ունի որ և է հարսնացուի (Աստւած տայ, ոչ ոքի ինկատի չ'ունենայ), բայց յարգելի պառաւը իւր դիտաւորութիւնները չի ծածկում: «Որ քո նման փեսացուի համար, — զրում է նա, — իսկոյն պառերազմ կը ծաղի կարմիր ու սպիտակ վարդերի մէջ, այդ հեշտ է գուշակել»: Լաւ: Բայց ես շատ եմ չար-

շարւած և չեմ ուզում ոչ մի պատճառ դառնալ, մանաւանդ չեմ
ուզում Հէնրիկ VIL-ի նման՝ վարդերի պատերազմը վերջացնել պսակ-
մելով; Միւս կողմից (այդ ի հարկէ չեմ կարող ասել հօրաքրոջս,
բայց ինքս իմ առաջ կը բացւեմ)՝ ես չեմ սիրում լեհուհիներին:
Ես երեսուն ու հինգ տարեկան եմ, ես էլ՝ ուրիշ բոլոր շատ ապ-
րած մարդկանց պէս զանազան սիրային արկածներ եմ ունեցել, լե-
հուհիների էլ եմ ռաստ եկել, և այդ բոլոր արկածներն ու ընդ-
հարումները ինձ վրայ այն տպաւորութիւնն են թողել, որ լեհու-
հիները ամենաանյարմար, ամենասաստիկ չարշարող կանաչքն են
աշխարհում: Չը զիտեմ՝ ընդհանրապէս առած լեհուհիները ֆրան-
սուհիներից ու գերմանուհիներից աւելի բարոյական են թէ չէ,
բայց զիտեմ որ նրանցից շատ աւելի պաթետիկ են: Մի տեսակ
ցուրտ եմ զգում երբ որ այդ բանի մասին մտածում եմ: Խնձ հա-
հասկանալի է էլեգիան՝ փշրւած գաւաթի առիթով, երբ մարդ առա-
ջին անգամ տեսնում է գաւաթի՝ գետնին ցիր ու ցան ընկած՝ բե-
կորները, բայց կարդալ այդ էլեգիան միատեսակ յուզմունքով մի
քանի անգամ կոտրտւած գաւաթի վրայ, — այդ, նման է օպերեատի:
Ի՞նչ եմ ասում, շատ դուրեկան բան է վկարեկցող ունկնդրից դերը,
որ քաղաքավարութիւնց ստիպւած լուրջ բանի տեղ պէտք է զնի
այդ բոլորը: Այս ասրօրինակ, ֆանտաստիք կանաչք՝ կրակոս զլուխ-
ներով ու ձկան տեմպերամենտով, նրանցում չը կայ ոչ միայն ուրա-
խութիւն, այլ և պարզութիւն: Նրանք աւելի հետաքրքրուում են
զգացմունքի ձեռով և քիչ են ուշք դարձնում ներքին բովանդակու-
թեան վրայ: Այդ պատճառով մարդ երբէք չի կարող իւր զործը
ինչպէս պէտքն է առաջ տանել լեհուհու հետ: Ֆրանսուհու, իսա-
լուհու հետ բան բռնելիս, եթէ մարդ սկզբի յաւածաղրութիւնները
արամարանօրէն կազմի, միշտ կարող է սպասել իւր «ԵՐԳՕ»-ին (ու-
րեմն): Խսկ լիհուհու հետ՝ երբէք: Մէկը, չը զիտեմ ով, ասել է,
թէ տղամարդը սիսալելիս կ'ասի՛ երկու անգամ երկուաը կ'անի
հինգ, և սիսալը հեշտութեամբ կարելի է բռնել. խսկ կինը սիսալե-
լիս կը սկսի պնդել թէ երկու անգամ երկու կ'անի լամազ, և այն
ժամանակ երկինք էլ թռչես բան չես կարող անել: Ահա այդպիսով,
ամենից առաջ՝ լեհուհիների արամարանութեամբ կարող է զուրս
գալ, որ երկու անգամ երկուաը չորս չէ, այլ լամազ, սէր, ատելու-

թիւն, կատու, արտասուք, պարտականութիւններ, ճնճղուկ, արհամարհանք,—ոչինչ չի կարելի ոչ նախատեսել, ոչ հաշւել, ոչ էլ կարելի է նախազգուշութեամբ մի որ և է միջոց ձեռք առնելի Գուցէ այդ թակարդների շնորհիւ լեհուհիների առաքինութիւնը աւելի է ապահոված քան ուրիշ կանանցը, թէկուզ այն պատճառով որ յարձակում գործողները սաստիկ տաղակութիւն են զգում: Բայց մի բան, որ ես շատ լաւ եմ նկատել և չեմ կարող նրանց ներել ացր ացն է, որ նրանց թակարդները, պատճէշները, որոգայթները, քաջամիրտ ինքնապաշտպանութիւնը,—բոլորն էլ զործ են զնուում ոչ ացնքան թշնամիներին շուտով յետ մղելու, որքան՝ բուռն յուզմունքներ ստանալու համար:

Մի անգամ ես խօսում էի այդ բանի մասին, ի հարկէ աշխատելով որքան կարելի է հարը (ՈՎՈՎՈՎ) ոսկեզօծել, մի շատ սրամիտ լեհուհու հետ, որ սակայն զուտ լեհուհի չէր, այլ կիսով չափ (Նրա հայրը իտալացի էր): Նա լսեց իմ ասածն ու պատասխանեց.

—Այդ բանում զուք այն տեսակէտիցն էք նայում, որից նայում է աղւէսը աղաւնէտան վրայ: Զեղ զուր չի զալիս, որ աղաւնիները շատ բարձր են ապրում և որ նրանց թերը հաւերի թեերից ուժեղ են: Զեր բոլոր ասածները կարելի է մեկնել յօդուտ լեհուհիների:

—Խ՞նչպէս,

—Որքան որ լեհուհին վաստ է իրրե ուրիշի կին, այնքան նա կարող է ցանկալի լինել իրրե սեփական կին:

Խնձ, ինչպէս ասում են, նեղը զցեց և ես շը կարողացայ իսկոյն պատասխան գտնել նրա ասածին: Գուցէ և ճիշտ է, որ ես այն տեսակէտիցն եմ նայում ինչ տեսակէտից որ աղւէսն է նայում աղաւնէտան վրայ: Անկասկածելի է և այն, որ, եթէ ես ընդհանրապէս՝ ստիպւած լինեի պսակւել և մասնաւորապէս՝ լեհուհու հետ պսակւել, այդ լեհուհուն կը վնասուի ոչ միայն բարձր տեղում աղրող աղաւնիների մէջ, այլ և միմիայն սպիտակ աղաւնիների մէջ:

Բայց ես կարող եմ ինձ համեմատել ձկան հետ, որ այն հարցերին, թէ ինչ սուստով է ուզում իրան եփեն, պատասխանում է, թէ ամենից առաջ՝ սկի չի ուզում եփւած լինի: Այստեղ ես նորից սկսում եմ իմ մեղադրանքները ձեզ գէմ, սիրելի հայրենակցուհի-

ներս: Ընդհանրապէս՝ դուք աւելի սիրոց դրաման էք սիրում քան նոյն իսկ սէրը: Զեզնից ամեն մէկը մի թագուհի է ստեղծւած, և դուք դրանով սարսափելի տարբերում էք ուրիշ կանանցից: Զեզնից իւրաքանչիւրը կարծում է, թէ հէնց միմիան նրանով, որ թոյլ է տալիս իրան սիրել, ահազին բարերարութիւն է անում: ձեզնից ոչ մէկը չի համաձայնիլ միայն լրացուցիչ մասն լինել ուղամարդու կեանքի, որ մենք գոյութիւն ունենք ձեզ համար, և ոչ թէ դուք՝ մեզ համար: Աերջապէս՝ դուք աւելի ձեր երեխաներին էք սիրում քան ձեր մարդուն: Ձեր մարդու վիճակը՝ արրանեակի վիճակ է: Ես շատ անդամ եմ այդ բանը դիմել, - դուք այդպէս էք ամեն տեղ: Դուք միայն հազարից մէկ էք փայլում՝ աւազի մէջ փայլող գոհ հարի պէս: Ոչ, թագուհիներս, թոյլ տէք ինձ հեռուից զլուխ տալ ձեզ:

Մի անգամ ընդ միշտ երկրորդական նշանակութիւն ունեցող բան գարձնել իւր բոլոր նպատակները, բոլոր իդէաները, ամեն օր խնկի նման վառւել կնոջ սեղանի վրայ՝ այն էլ սեփական կնոջ,— չէ, mesdames, այդ մի փոքր քիչ է մարդու համար: Ասենք՝ իմ ինքնանանաշութիւնս իսկոյն ինձ հարց է տալիս, սիսկ դրանից լաւ ի՞նչ կարող ես անել ի՞նչ զիտաւորութիւններ, ի՞նչ ծրագիրներ ունիս: Դու որ՝ հէնց իսկ և իսկ նրա համար ես ստեղծւած, որ ողջակէզ լինեա:

Բայց չէ, — թող կորչի, մարդ որ պատկեց պէտք է այնպէս փոխի կեանքը, այնքան սովորութիւններից, առանձնայտկութիւններից, ճաշակներից հրաժարվի, որ դժւար թէ ամենամաքուր, ամենապիշն սէրն էլ կարողանայ վարձատրել այդ բոլորի փոխարէն: Այդ իմ բանս չէ: Ես առանց այն էլ կարգին շարշարւած եմ: Ամուսնութիւնը՝ կամքի և դէպի կանայք զգացած հաւասի այնպիսի մի վիթիսարի արտայացութիւն է, որ իմ ոյժս չի պատիլ այդ անել: Դարձեալ կրկնում եմ, — ես չեմ ուզում եփւած լինեմ ոչ մի սոսւսով:

Վարշաւա, 21 լունարին

Այս առաւօտ հասայ այստեղ, բայց որովհեաւ Վիէննայում իշեանեցի, ճանապարհը ինձ շատ չի նեղացրել: Նատ ուշ է, ջղերս

Հեն թողնում քննեմ; ուստի սկսում եմ զրել: Քիչ-քիչ ոռվորում եմ յիշատակարանիս, և այդ սկսում է ինձ զւարձութիւն պատճառել: Մեր տանը ուրախութիւն է այժմ... ի՞նչ քաղցր էակ է հօրագոյրա: Նաև հաւանական է, նրա քունն էլ այժմ չի տանում՝ ուրախութիւնից, իսկ ճաշին ոչինչ չը կարողացաւ ուտել: Պլոշովում նա սովորաբար ամեն օր կուռմ է իւր կալւածի կառավարիչ պան Խվասովվակու հետ, որ շատ բարկացաւ շեխատիչ է, թոյլ չի տալ որ իրան ասեն թէ աչքի վերեւը յօնք կայ և ամեն մի խօսքին տասը կը պատասխանի: Երբ որ կոխուը հասնում է այնուեղ, որ ըստ երեսցին նրանք պէտք է մի քանի բոպէից յետոյ կորեն իրարից յարաբերութիւնները, հօրագոյրս լուռմ է և սկսում է ախորժակոյ, մինչեւ անգամ ազահութեանը ուտել: Այսօր նա պէտք է բաւականար փնփնթալով ծառաների վրայ, որ նրա սիրտը այնքան չը հովացրեց ինչքան պէտքն էր: Չը նայելով դրան՝ նա շատ լաւ տրամադրութեան մէջ էր, և անկարելի է նկարագրել, թէ որքան քնքշութիւն կար այն հայեացքների մէջ, որ նա ակնոցի տակից քցում էր ինձ վրայ: Նրա ծանօթների շրջանում ինձ կուռք են անւանում և նա դրանից սաստիկ նեղանում է:

Կասկած չը կայ. իմ ահս ու ենթադրութիւններս արդարացան: Ոչ միայն մտադրութիւն կայ, այլ մինչեւ անգամ հարմացուի տեղ էլ է արած: Հօրագոյրս ճաշից յետոյ սովորութիւն ունի մեծմեծ քայլերով քայլել մի անկիւնից միւսը և մուածել՝ ինքն իրան խօսելով: Եւ այդպիսով, չը նայելով այն խորհրդաւ որութեանը, որով նա շրջապատում է իրան, ևս լսեցի հետեւալ մենախօսութիւնը.

— Երիտասարդ, գեղեցիկ, հարուստ, հանճարեղ... յիշար կը լինի, եթէ իսկոյն չը սիրահարեի:

Վաղը գնում ենք փանդրէքի (pique-nique), որ երիտասարդները սարքում են ի պատիւ տիկինների: Խնջոյքը շատ շքեղ կը լինի:

Վարշաւա, 25 լունւարի:

Ես յաճախ ձանձրանում եմ պարահանդէսներում իրեւ «homo sapiens», տանել չեմ կարողանում նրանց իրրեւ փեսացու, որ ապագայում պէտք է ամուսին լինեմ, բայց երբեմն սիրում եմ նրանց

իրրե արտիստ,—ի հարկէ անպորտվէլլ արտիստ: Խնչ գեղեցիկ է, օրինակ, լայն, պայծառ լուսաւորւած, ծաղիկներով զարդարած սանդուղքը, որով վերև են բարձրանում պարահանդէսի շորեր հազած կանալք: Նրանք բոլորը այդ ժամանակ շատ բարձրահասակ են երեւում ինձ, իսկ երբ ես նրանց նայում եմ ներքեմից ու տեսնում եմ, թէ ինչպէս նրանք յետևներից քաշ են տալիս շէքիները, միտք են գալիս Յակոբի՝ երազում տեսած՝ հրեշտակները: Ես սիրում եմ այդ շարժումը, լոյսը, ծաղիկները, այդ նուրբ կոտրները, որոնք նօսր մշուշի նման պատում են ջահէլ օրիորդների մարմինները: Խսկ այդ վզերը, լանջերն ու ուսերը... որոնք թիկնոցներից ազատւելով կարծես սառչում պնդանում են օդի մէջ ու մարմարի պնդութիւն են ստանում: Հոտառութիւնս էլ մեծ զւարճութիւն է ստանում: Սիրահար եմ լաւ անուշահոտութիւնների:

Խնջոյքը շատ յաջող է: Արգարութիւնը պահանջում է ասել, որ Ստաշևսկին այդպիսի բաներ սարքելու չնորհք ունի: Ես հօրաքրոջս հետ եկայ, բայց սրահում աշքից կորցրեցի նրան, որովհետև Ստաշևսկին վազէվազ իջաւ ներքեւ նրան սանդուղքովը տանելու համար:

Հօրաքրոջս հագին մի տեսակ երկար թիկնոց է կզաքիսի մորթուց, որ նա միշտ հագնում է այդ տեսակ խնջոյքների գնալիս: Դահլիճը մանելով, ես կանգ առայ դրան մօտ մի քիչ չորս բոլորքս աչք ածելու համար: Մարդ միշտ մի տեսակ օտարութի տպաւորութիւն է զգում, երբ որ երկարատև բացակացութիւնից յետոյ նորից իւր հայրենակիցների մէջ է ընկնում: Մարդ այն ժամանակ կառարելապէս զգում է որ դրանք իրան աւելի մօտ մարդիկ են քան բոլոր նրանք, որոնց հետ սրիշ տեղերում պատահել է, բայց այնուամենայնիւ ժամանակով մարդ զննում է նրանց և եզրակացութիւններ է անում օտարի նման: Կանալք առանձնապէս գրաւեցին իմ ուշադրութիւնը:

Այսպէս թէ այնպէս, մեր հասարակութիւնը փայլուն հասարակութիւն է: Գեղեցիկ դէմքեր էլ են պատահում, տղեղներ էլ, բայց բոլորի վրայ էլ հին և նուրբ քաղաքակրթութեան դրոշմ է երևում: Կանանց վզերն ու ուսերը, մինչև անգամ մատղաշ, դեռ չը կադմակերպւած վզերն ու ուսերը Սևրի ճենապակի են յիշեցնում: Գծերը

գողարիկ են, զգացում է գեղարւեստական կատարելութիւն։ Խոչ ոտներ տեսայ, ինչ ձեռներ, ինչ զլուխներ՝ ճիշտ որ այսուղ եւրոպացի չեն ձեռնում, այսուղ հենց եւրոպա է։

Այդպէս կանգնած մնացի մօտ քառորդ ժամ, մոտածելով նոյնպէս և այն բանի մասին, թէ տեսնես այդ սիրուն զլուխներից, այդ լանջերից որն է է, ինձ համար ընտրել հօրաքոյրս։ Այդ ժամնակ ինձ մօտեցան Մնեատինսկիները։ Մարդուն մի քանի ամիս առաջ տեսել էի Հռոմում։ Կնոջ հետ էլ առաջուց ծանօթ էի։ Ես սիրում եմ նրան, նա վերին աստիճանի համակելի դէմք ունի։ Նա սպառանում է այն հազւադիւտ լեհուհիների թւին, որոնք չեն մաշում իրանց մարդկանց կեանքը, այլ նւիրում են նրանց իրանց կեանքը։ Մի քիչ ժամնակից յետոյ մեր մէջ բուսաւ մի ջայէլ օրիորդ, բարեկց տիկին Մնեատինսկային ու մեկնեց ինձ սպիտակ ձեռնոցի մէջ ամփոփւած ձեռքը։

— Ձես ճանաչում ինձ, Վ. Յ. օն։

Այդ հարցը ինձ մի քիչ շփոթեցրեց։ Առաջին րոպէին ես չը ճանաչեցի հետո խօսողին, բայց այնուամենայնիւ, չուզենալով անքաղաքավարի գոնուել, սեղմեցի նրա ձեռքը, զլուս տւեցի, ժըստացի և պատասխանեցի, — «Նուպէս չէ, ինչպէս չէ։ Ճանաչմում եմ։ Ի հարկէ»։ Անշուշոյ այդ րոպէին դէմքս շատ յիմար արտապայտութիւն էր տացել, որովհետեւ պանի Մնեատինսկան ծիծաղեց ու ասաց.

— Եկէք խոստովանւեցէք, չը ճանաչեցիք չէ։ դիտէք ով է, — Անելիս Պ.։

Անելիկան, իմ կուզի'ն ա։ Զարմանալի չէ, որ ես նրան չը ճանաչեցի։ Ես նրան տեսել եմ սրանից տասը, տասնըմէկ տարի առաջ երբ նա գեռ ծնկահան չորեր էր հագնում։ Միտքս է, Պլոշովումն էինք այն ժամնակ, պարտէզում — վարդագոյն գուլպաներ էին հագին և մոծակիները սաստիկ կծոռում էին նրան, որի պատճառով նա քուռակի նշան ոտները գետնովն էր տալիս։ Խնչպէս կարող էի ես գիտի ընկնել, որ այդ մանուշակազարդ լանջը, այդ սպիտակ ուսերը, այդ թուխ աչքերը, այդ չքնաղ դէմքը, — մի խօսքով այդ վիթթազարդ օրիորդը և այն բարակ ոտներով աղռաւիլը, — միեւնոյնն են։ Օ՛, ի՞նչ զեղեցիկ է։ Ինչ հիանալի թիթեռ է զուրա եկել այն բռնօժից։ Ես կրկին և այս անգամ աւելի անկեղծութեամբ մեկնեցի

նրան ձեռքս: Յետոյ Մնեատինսկիները հեռացան, իսկ Անելիան ասացինձ, որ նրան ուղարկել էին իմ յետեից իւր մայրն ու հօրաքոյրս: Ես թեև առաջարկեցի նրան և մենք միասին վնացինք դէպի դահլիճինքի խորքը:

Ձեռաց ամեն բան պարզեց ինձ համար: Ակներեւ է, հօրաքոյրս Անելիալին ինկատի ունի: Այս էր ուրեմն գաղտնիքը, այ անսովասելի բան: Հօրաքոյրս միշտ շատ սիրել է Անելիալին և շարունակ տանջել է սիրտը պանի Պ.-ի տնտեսական հոգսերով: Ինձ միայն այն էր զարմացնում որ նրանք հօրաքրոջ տանը չէին եղել. բայց ես չէի ուզում մտածել այդ հարցը վճռելու համար և աւելի լաւ համարեցի զննել Անելիալին, որ՝ հասկանալի է սկսեց ինձ աւելի հետաքրքրեցնել քան կը հետաքրքրեցնէր առաջին պատահած օրիորդը: Ճանապարհին ես բաւական ժամանակ գտայ թէ խօսակցութեան համար, թէ հարցաքննութեան, մենք զնում էինք դահլիճի միւս ծագը, իսկ բազմութիւնը քանի զնում աւելի ու աւելի խտանում էր: Վերջին մոլան հարկադրում է հազնել միջակ երկացնութեամբ մինչև արմոնքը չը հասնող ձեռնոցներ, ուստի ես նկատեցի նախ և առաջ, որ Անելիայի կուռը որ յենում էր իմիս վրայ, թուխ գոյն ունի գուցէ չափից դուրս առաստ աղւամազից: Սակայն Անելիան թուխս չէ, թէև առաջին անգամից թուխսի տպաւորութիւն է գործում: Նրա մազերը բրոնզագոյնին են տալիս: Աչքերը բաց գոյն ունին, բայց նոյնպէս մե են թուռմ չափից դուրս երկայն թերթերունքների շնորհիւ: Սակայն յօնքերը բոլորովին սե են և շատ գեղեցիկ: Այդ նեղ-ճակատաւոր փոքրիկ գլխի բնորոշ յատկութիւնն է՝ մազերի, յօնքերի, թերթերունքների ու աղւամազի չափից դուրս առատութիւնը, աղւամազի՝ որ թշերի կողքերում մետաքսի նման նուրբ է դառնում և բոլորովին բաց գոյն է ստանում: Այդ բոլորը միասին առած՝ ժամանակով կարող է նրա գեղեցկութեանը վնասել, բայց այժմ ցոյց է տալիս միայն նրա կազմաձքի կենսունակութիւնն ու ամրութիւնը և այդ աղջկանը դարձնում է ոչ թէ սառը տիկնիկ (եւելա), այլ ջերմ, կայտառ, վերին աստիճանի գրաւիչ կին:

Խոստովանում եմ որ թէև իմ ջղերս երես առած են և չեն խաղալ ամեն մի չնչին պատճառից, սակայն շատ լաւ են նրա հրապոյրները: Այդ իմ տիակս է: Հօրաքոյս,—որ եթէ Դարւինի անունը լսել

է, նրան ի հարկէ փուչ մարդ է համարում, - ակամալ վարուում է Դարսինի բնական ընտրողութեան (естественныи подборъ) թէօրիայի համաձայն: Այս Ազգ իմ տիպս է: Այս անգամ կարթիցը լաւ խաջծեն կախ տւել:

Մի տեսակ էլեքտրական հոսանքներ սկսեցին անցնել նրա կռնից իմա: Բայցի այդ՝ նկատեցի, որ ես էլ եմ նրա վրայ լաւ տպաւորութիւն գործում, իսկ այդ միշտ աշխոյժ է ներշնչում մարդու: Հարցաբննութիւնը, որին ես նրան ենթարկեցի իրքև արտիստ, նոյնպէս լաւ հետեւանքներ տւեցի:

Կան դէմքեր, որոնք կարծես փոխադրութիւն լինեն երաժշտութիւնից կամ բանաստեղծութիւնից մարդկային դիմագծերի: Այդպէս է և Անելիայի դէմքը: Նրա դէմքում չը կայ գուեհկականութիւն: Ազնւատոհմ ընտանիքների օրիորդներին գաստիարակութիւնը համեստութիւն է պատւաստում այնպէս, ինչպէս երեխաներին ծաղիկ են պատւաստում: Ազդպէս Անելիայի երեսին էլ կայ այդ արտաշայտութիւնը, կայ մի տեսակ անմեղութիւն: Տակից երեսում է տաք տեմպերամենու: Ի՞նչ զուգակցութիւն է: Միևնոյնն է թէ մէկն ասէր — անմեղ սատանա:

Ենթազրում եմ, սակայն, որ Անելիան, չը նայելով իւր անմեղութեանը, կարող է մի քիչ կսկս լինել. ձեռաց նկատեցի, որ նա շատ լաւ հասկանում է իւր գրաւչութեան ոյժը: Օրինակ՝ զիտենալով, որ հրաշալի թերթերունքներ ունի, նա շարունակ տեղի-անտեղի քաշ է զցում թերթերունքները: Նոյնպէս կարողանում է նա շատ գողարիկ կերպով բարձրացնել զլուխը և նայել խօսակցի վրայ: Խօսակցութեան սկզբում նա մի քիչ արւեստական կերպով էր իրան պահում, համարձակ չէր, բայց շուտով երկուս էլ մեզ այնպէս սկսեցինք զգալ, կարծես թէ մեր վերջին տեսակցութիւնից յետոյ սկի չէինք բաժանել իրարից:

Հօրաքոյրս աննման է իւր մաքամորութեամբ, բայց ես չէի ուզենալ նրա հետ մասնակցել որ և է դաւադրութեան: Հէնց որ ես ու Անելիան մօտեցանք մերոնց և ես բարեեցի Անելիայի մօր հետ ու մի քանի խօսք խօսեցի, հօրաքոյրս նկատեց, որ աշխուժացել եմ, աչքերը խակոյն փայլեցին, յետոյ ուսերը վեր քաշեց ու դառնալով Անելիայի մօրը բարձրաձայն ասաց.

— Ինչ սազում են մանուշակները։ Հըմի Շատ յաջող միաք էր նրան առաջին տնգամ պարահանդէսում ցոյց տալը։

Անելկայի մայրը շփոթեց, Անելկան նոյնպէս, իսկ ես հասկացաց թէ ինչու նրանք հօրաքրոջս տանը չէին իջել։ Ակներեւ է, պանի Պ.-ի ծրագիրն է եղել այդ։ Երևի նա վաղուց համաձայնութիւն է կայացրել հօրաքրոջս հետո ևս ենթադրում եմ, որ նրանք գուցէ Անելկային լիովին հաղորդակից չէին արել իրանց գաղտնիքին, բայց նա, շնորհիւ այդպիսի հանգամանքներում միշտ արտայայտող օրիորդական սրամութեան, դիսի ընկաւ թէ բանն ինչումն է։

Ըսդհանուր շփոթութեանը վերջ տալու համար, ես դիմեցի նրան ու ասացի։

— Առաջոց ասում եմ, որ վատ եմ պարում, բայց քեզ շարունակ կը խլեն ինձանից, հրաւիրելով պարելու, ուստի խոստացիր ինձ հետ պարել մի վալու։

Անելկան ի պատասխան առաջարկեց ինձ իւր տեսրը և վճռական կերպով ասաց։

— Գրիր ինչ որ ուզում ես։

Խոստովանում եմ, ես չեմ սիրում մաննը էնի դեր կատարել, որին թելով քաշելով շարժում են։ Չեմ սիրում, որ ինձ հրեն այս կամ այն կողմը։ Ուստի, ուզելով մի անգամից ներգործական դեր գրաւել պառաւ։ տիկինների քաղաքականութեան մէջ, առայ տեսրը և գրեցի, — Հասկացմար, որ մեզ ուզում են պսակել։

Անելկան որ կարդաց, գէմքը այլայլեց, իսկ յետոյ մի քիչ գունաթափ եց։ Մի բոպէաչափ լուռ կացաւ, կարծես վախենալով որ ձայնը կտրւի պատասխանելիս կամ տառանւելով թէ ինչ պատասխան տայ ինձ, վերջարկէս բարձրացրեց հրաշալի թերթերունքները ու նացելով ուղիղ իմ աչքերին պատասխանեց։

— Այն։

Բայց այժմ արդէն նա սկսեց հարց ու փորձի հնթարկել ինձ, ճիշա՞է՝ ոչ խօսքերով, այլ աչքերով։ Ես արդէն վերն ասացի, որ նրա վրայ լաւ տպաւորութիւն եմ զործել և բացի այդ նա շուտով գուշակեց հօրաքրոջս ու իւր մօր ծրագիրները ուրեմն՝ նրա ուշ ու միաքը պէտք է ինձնով գրաււած լինէր։ Եւ այդպէս՝ այդ ժամանակ ես պարզ կարդացի նրա աչքերում։

— Գիտեմ, որ մայրս ու մօրաքողս ¹⁾ ուզում են, որ մենք իրար ճանաչենք, մտերմանանք, ուրեմն... ուրեմն... դու ինչպէս:

Պատասխանելու փոխարէն ես ձեռքս զցեցի նրա մէջքովը և մի քիչ մօտեցրեցի ինձ: Վալս էին ածում: Միտքս եկան վլարժութեան ժամերը»:

Այդ համբ խոստովանութիւնը կարող էր յուզել օրիորդին, որին չէին կարող շփոթեցրած չը լինել տեսրումը գրած խօսքերս: Բայց ես մտածում էի, — ինչ կը լինի որ, թող մի քիչ էլ յուզելի Յամենայն դէպս, ես որ՝ ուզածիցս դէնը չեմ գնալ, իսկ թէ նա ո՞ր աստիճան կարող է տարւել - այդ ինձ շատ քիչ է հեռաքրքրում: Անել կան շատ լաւ է պարում, իսկ այդ վալսը նա պարում էր այնպէս ինչպէս պէտք է ամեն մի կին պարի վալսը, այսինքն մի քիչ ինքնանուացութեամբ անձնատուր լինելով իրա կաւալերին: Ես նկատեցի, նրա կրծքի մանուշակները աւելի թունդ են տատանւում քան կարելի էր բացատրել վալսի բաւական դանդաղ բազիսումով (TEMPO): Ես հասկացայ, որ նրա մէջ ինչ որ մի բան է ծագումն Անելը պարզ ի պարզոյ փիզիկական պահանջ է, որ լաւ շրջանի օրիորդները մեծ ջանքով վարում են, բայց որ այնուամենային անընկճելի է: Եւ ահա երբ որ օրիորդին ասում են, — «կարող ես նրան սիրել», շատ անգամ սպասահում է որ օրիորդը օգտում է այդ թողարկութիւնից առանց մի բոպէ կորցնելու:

Անելիսան անշուշտ սպասում էր, որ ես, իմ առաջին համարձակ հարցից յետոց, վերջացնելով վալսը մի կերպ բացատրութիւն կը սկսեմ նրա հետ, բայց եւ դիտամբ հեռացայ, որպէս զի նա մնայ սպասող դրութեան մէջ:

Ի միջի այլոց՝ ես ուզում էի հեռակաց նայել նրա վրայ: Հաս-

¹⁾ Պլոշովսկու և Անելիկալի ազգականութիւնը որոշած չէ, որովհետեւ կուզին անւանում է թէ հօրաքրոջ, մօրաքրոջ, հօրեղոր, քեռու աղջկը (այդ դէպքում կաթոլիկները թէն կարող են իրար հետ պատկեր բայց շատ դժւարութեամբ) և թէ պապի ու տատի եղբօր կամ քրոջ աղջկը, թոռը և աղնու Մօրաքրոջ ալտանը և շատ ուրիշ տեղերում (շարունակութեան մէջ) գործ է դրում իբրև սովորական մակդիր ազգական կողմ:

Մահօթ. թարգմ.

տատ որ՝ իմ տիպս է: Այդ տեսակ կանալքը ինձ քաշում են մազնիսի նման: Ախ, երանի նրա տարիքը երեսունի մօտ լինէր և ինձ ուզելիս չը լինէին պսակել նրա վրայ:

Վարչաւա, 30 լունւարի:

Անելիան ու մայրը տեղափոխեցին մեզ մօտ: Երէկ ամբողջ օրը անց կացրի Անելիալի հետ: Նրա հոգին աւելի էջեր ունի քան առհասարակ ունենում են նրա հասակի օրիորդները: Այդ էջերից շատերը կը գրոտի ապագան, — տեղ չառ կայ լաւ բաներ գրի անցնելու համար: Նա զգում ու հասկանում է ամեն բան, իսկ ականջ է զնում աննման կերպով, մի տեսակ կենարոնանալով ու լայն բաց անելով իւր խելօք աշքերը: Այն կինը, որ ականջ դնել գիտի, բացի ուրիշ միջոցներից մի աւելի միջոց էլ ունի դուր գալու, — այդ շոյում է տղամարդու բնքնասիրութիւնը: Դիտէ արդեօք այդ բանը Անելիան, թէ նրա կանացի յաջողակ բնազդումն է նրան այդպէս անել տռողը: Գուցէ և կարող է այն էլ լինել որ այնքան բան է լսել իմ մասին հօրաքրոջիցս, որ իշ իւրաքանչիւր խօսքը պատդամի տեղ է ընդունում:

Ասենք՝ մասամբ էլ կոկետութիւն է անում: Այսօր երբ ես հարցրեցի, թէ նրա սիրուը ինչ է ուզում ամենից աւելի, նա պատախանեց, — «Հուոմը տեսներ» և քաշ գցեց իւր վիճաւոր կոպերը աշքերի վրայ և այդ բոպէին այնքան գեղեցիկ էր որ ասել չի կարելի: Վերին աստիճանի գեղեցիկ է այդ: Նա լաւ տեսնում է, որ ինձ դուր է գալիս, և այդ նրան բախտաւորեցնում է: Նրա կոկետութիւնը հիանալի է, — որովհետեւ բղխում է հրճւած սրտից, որ ուզում է դուր գալ մի ուրիշ սրտի, որին ինքը ընտրել է: Ինձ համար անկասկածելի է, որ նրա հոգին ձգտում է դէպի ինձ ինչպէս որ թիթեռնիկը ձգտում է դէպի բոցը: Խեղճ երեխան օգտում է մեծերի թոյլուութիւնից և օգուռում է շտապելով, առանց մի բոպէ կորցնելու: Այդ կարելի է ժամ ժամ դիտել:

Ես ինքս ինձ իսկապէս պէտք է հարց առաջարկէի, — եթէ որ չես ուզում պսակւել, էլ ինչմեծ ես ամեն միջոց գործ զնում, որ այդ աղջկան սիրահարեցնես քեզ վրայ: Բայց ես չեմ ուզում պատասխանել այդ հարցին: Ես ինձ շմար լաւ ու հանգիստ եմ զգում:

Սակայն իսկն ասած ես ինչ եմ անում որ Ես չեմ աշխատում երեալ ոչ աւելի լիմար, ոչ էլ աւելի անդուր կամ հակակրելի քան եմ իսկապէս, — էլ աւել ոչինչ:

Անելիան եկաւ այսօր առաւօտեան սուրճ խմելու, հագած մի տեսակ լայն ու շերտ-շերտ նաւասափական բլուզ, որի տակից կարելի էր միայն զուշակել նրա մարմինի զծագրութիւնը, բայց և կարելի էր գժւել այդ զուշակութիւններից: Աչքերը մի քիչ քնաթաթախ էին և նրա մէջ մի տեսակ քնի տաքութիւն էր երեւում: Այսպիսի տաղաւորութիւն է զործում ինձ վրայ որ խօսքով արտայացնել չի կարելի:

31 լունւարի:

Հօրաքոյբս երեկոյթ և սարքում Անելիայի համար: Ես այցելութիւններ եմ անում: Մնեատինսկինների մօտ էլ եղայ և երկար նստեցի, որովհետեւ ինձ նրանց տանը լաւ եմ զգում: Մնեատինսկինները մի բոսէ չի լինում որ իրար հետ անհամաձայնութիւն չունենան, բայց ոչ այնպիսի անհամաձայնութիւն ինչպէս ուրիշ շատ աշունական զոյզերի մէջ է լինում: Սովորաբար ամուսիններից իւրաքանչիւրը վերարկուն իւր կողմն է քաշում, իսկ սրանց վէճը նրա վրայ է, որ մարդը ուզում է ամրող վերարկուն տալ կնոջը; իսկ կինը՝ մարդուն: Ես շատ եմ սիրում նրանց, որովհետեւ միմիայն նրանց տանն եմ համազում, որ բախտաւորութիւնը կարող է լինել ոչ թէ միայն գրքերում գրտող, այլ և բոլորովին իրական բան: Բայցի այդ՝ նա սուր խելք ունի, տպաւորւող է Ստրադիւրիուսի ջութակի նման և լիովին գիտակցում է իւր բախտաւոր լինելը: Նա ուզում է բախտաւոր լինել և բախտաւոր է: Նախանձում եմ նրան այդ բանում: Ինձ միշտ հաճութիւն է պատճառում նրա հետ խօսելը: Ինձ տւեցին խմելու թունդ սև սուրճ, — զժւար թէ բացի գրողներից՝ էլ ուրիշ այդ տեսակ սուրճ խմողներ լինեն, — և սկսեցին հարցուփորձ անել, թէ ինչպէս են երեւում աչքիս Վարշաւան ու մերոնք իմ երկարատեւ բացակայութիւնից յետոյ: Հարցումներ եղան նոյնպէս և վերջին խնջոյքի մասին, մանաւանդ պանի Մնեատինսկայի կողմից, որովհետեւ նա քիչ ու միշտ հասկանում է

հօրաքրոջս դիտաւորութիւնները և բացի այդ վիճացի է, այսինքն այն կողմերից, որտեղից որ Անելիան է, ու լաւ ճանաչում է Անելիացին, այնպէս որ շատ ուրախ կը լինի եթէ կարողանայ իւր վարդագոյն պուճուր քիթը խառնել այդ գործի մէջ:

Ինչ խօսք, որ ես զգուշութեամբ աշխատում էի չը խօսել անձնաւորութիւնների մասին, բայց մեր հասարակութեան մասին ընդհանրապէս առած՝ շատ խօսեցինք: Ես յաջանեցի իմ կարծիքս այդ հասարակութեան շնորհալիութեան մասին. Մնեատինսկին, որ թէև ինքը շատ անգամ խիստ քննադատում է մեր հասարակութիւնը, բայց միենոյն ժամանակը սաստիկ, շովինիստութեան հասցրած շափով սիրում է լսել ամեն տեսակ գովասանքներ այդ հասարակութեան վերաբերմամբ, շատ լաւ տրամադրութեան մէջ ընկաւ և խոկոյն սկսեց ձայն պահել ինձ.

— Շատ ուրախ եմ; — ասաց նա վերջը, — որ այդպիսի բաններ եմ լսում ացնպիսի մարդուց ինչպէս դու, որովհետև առաջինը դու դէպք ես ունեցել համեմատելու ուրիշ հասարակութիւնների հետ, և երկրորդը՝ պենսիմեաս ես:

— Ինչ ես կարծում, սիրելիս, — պատասխանեցի ես, — այդ ասածիս մէջ էլ պեսսիմիստութիւն չը կամ:

Չեմ հասկանում՝ թէ ինչնու:

— Այ ինչու: Ամեն մի այդ աստիճան նրբացած կուլտուրայի վրայ կարելի է գրել այն, ինչ որ գրում են ապակեղէնի կամ ճենապակեղէնի արկղների վրայ, — *efragile* (դիւրաբեկ): Քեզ, որ հոդով Աթէնքի զաւակ ես, ինձ, մէկի-միւսի համար լաւ. և հաճելի է ասլրել այդպէս նուրբ ջղերի տէր մարդկանց հետ. բայց եթէ ուղենաս մի բան շինել այդ հիմքի վրայ, նախազգուշացնում եմ, զեղանները կը թափեն զլխիդ: Կարծում ես, կեանքի այդ նուրբ դիւրեանտները չթն յաղթելու գոյութեան կուռմ ամուր ջղեր, կոպիտ մկանուղներ ու հաստ կաշի ունեցող մարդկանցից:

Մնեատինսկին, որ շատ կայտառ մարդ է, վեր թռաւ տեղիցը, մի քանի անգամ գնաց—եկաւ սենեակի մէջ և յետոյ թռւնդ կերպով յարձակեց ինձ վրայ:

— Այդ միայն մի կողմն է, և նպաստաւոր կողմը, ինչպէս դու ինքդ էլ խոստովանւում ես: Բայց մի կարծիկ, թէ մեր մէջ բացի

դրանից էլ ոչինչ չը կայ: Դու արտասահմանիցն ես գալիս, սակայն այնպէս ես խօսում, կարծես ամբողջ կեանքդ այստեղ անցկացրած լինես:

— Ես չեմ խմանում, թէ ինչ կայ ձեր մէջ, բայց գիտեմ այն, որ աշխարհում ոչ մի տեղ հասարակութեան զանազան դասակարգերի կուլտուրայի մէջ այն աստիճան անհաւասարակշռութիւն չը կայ ինչպէս այստեղ: Մի կողմից ծաղկափթիթ՝ գուցէ և թառամած կուլտուրա, միւս կողմից՝ կատարեալ բարբարոսութիւն ու խաւար:

Սկսեցինք վիճել և արդէն մութն ընկել էր, երբ որ դուրս եկայ նրանց մօտից: Նա ինձ ասաց, որ, եթէ ես նրա մօտ շուտշուտ գնամ, խօսք է տալիս ցոյց տալ ինձ շղթայի միջին օղակը, որ ոչ չափից աւելի է նրբացած, ոչ դիլետանտութեամբ է վարակւած, ոչ էլ խաւարում թաղւած՝ նախնական մարդու նման,—մի խօսքով ցոյց տալ արի մարդիկ, որոնք գործ են անում և զիտեն թէ ինչ են ուզում: Նատ տաք-տաք էինք խօսում, իրար բերնից խօսքը խլում էինք, մանաւանդ որ սուրճից յետոյ մի քանի թաս կոնեւակ էինք խմել: Ես արդէն դուրս էի եկել, բայց Անեատինսկին դեռ յետևկիցս գուտում էր սանդուղքի վրացից.

— Քեզպէսներից, ի հարկէ, բան չի դուրս գալ, բայց քո զաւակներից կարող են մարդիկ դուրս գալ. միայն թէ դու կամ, ճիշտ ասած, դուք բոլորդ պէտք է մնանկանաք, ապա թէ ոչ ձեր թոռներն անգամ ոչ մի գործի չեն կալչիլ:

Կարծում եմ սակայն, որ ընդհանրապէս առած իմ ասածս էր ճիշտ: Այս խօսակցութիւնը զրի եմ անցնում իսկապէս նրա համար, որ գալուս օրից ի վեր շարունակ մտածում եմ հաւասարակշռութեան այդ բացակայութեան մասին: Անվիճելի փասս է, որ մեզնում հասարակական դասակարգերը իրարից բաժանուած են անդունդով, իսկ քանի այդ անդունդը կայ՝ այդ դասակարգերը ոչ մի կերպ չեն կարող միաբանել և ձեռքի տուած գործել: Անեատինսկին :ի կարող չը համաձայնել, որ մենք բաժանուում ենք երկու տեսակ մարդկանց, — չափից աւելի քաղաքակրթւածների և ամեննեին չը քաղաքակրթւածների: Գոնէ իմ աչքիս այդպէս է երկում Սերի ճենապակեղէն և կոպիտ կաւ, իսկ մէջտեղում՝ ոչինչ: Մէկը՝ «très fragile» (շատ դիւրաբեկ) է, միւսը՝ օւիզիոսի ասած «rudis indi-

gestaque moles» (անմշակ և անձև զանդւած): Ինչ խօսք՝ որ Աւերի ճենապակեղէնը վաղ թէ ուշ կը փշրւի, իսկ կաւից՝ ապագան կը կաղապարի ինչ որ սիրտն ուղենաց:

2 Փետրարի.

Երէկ մեզ մօտ պարերեկոյթ էր: Անելիան միանդամայն իւր վրայ էր զարձնում բոլորի ուշադրութիւնը: Նղարշի թէ տիւլի տակից—որտեղից գիտենամ: Թէ ինչպէս է կոչում այդ կտորը—նրա սպիտակ ուսերը ծովի փրփուրի մէջից դուրս եկող Վեներայի ուսերի նման էին երեսում: Վարշաւայում արդէն լուր է տարածւել, թէ ես պակւում եմ Անելիայի վրայ: Ես նկատեցի, որ երէկ նա պարի ժամանակ ամեն մի պառոյտ անելիս աշքերը ման էր ածում յետևիցս և ուշքը ցրւած էր լսում իւր հետապարող կաւալերների զաւզակարանութիւնները: Խեղճ աղջիկը այն ասորիճան չը գիտի ոչինչ ծածկել, այնպէս ցոյց է տալիս ամենքին իւր սրոտի մէջ եղածը, որ մարդ կոյր պէտք է լինի, որ այդ չը նկատի: Խակ իմ վերաբերմամբ նա այնքան մեղմ է, այնքան հլու է, այնքան երջանիկ է լինում, երբ որ մօտենում եմ: Ես սկսում եմ նրան շատ սիրել և սկսում եմ թուլանալ: «Այ Սնեատինսկիները՝ ի՞նչ երջանիկ են ապրում: Այս առաջին անգամը չէ, որ ինքս ինձ ուղում եմ հարց տալ,—արդեօք ինձնից յիմար է թէ խելօք՝ Սնեատինսկին: Ես եղած կենսական խնդիրներից ոչ մէկը չեմ լուծել, ես ոչինչ եմ, սկեպտիկականութիւնը մաշում է ինձ, ես բախտաւոր չեմ, ինձ յոդնած եմ զգում: Սնեատինսկին ինձնից պակաս դիտութիւն չունի, բացի այդ՝ նա գործով է զբաղւած. նա սիրուն կին ունի, բայց մի կենսական փիլիսոփայութիւն ունի, որի վրայ յենուում է նրա բախտաւորութիւնը: Խօսք չի կարող լինել, ես նրանից յիմար եմ: Սնեատինսկու փիլիսոփայութեան բանալին նրա կենսական դաւանանքներն են. զեռ պասկելուց առաջ նա ասում էր ինձ. Շայ մի բան, որին ես չեմ մօտենում իմ սկեպտիկականութեամբ, մի բան, որ ես կրիտիկայի չեմ ենթարկում, —իբրև գրականական գործչի՝ ինձ համար դաւանանք է հասարակութիւնը, իբրև մասնաւոր մարդու՝ սիրած կինը: Ես այն ժամանակ մտածեցի, —չէ, իմ խելքս աւելի համարձակ է, քանի որ չի վախենում ալղպիսի զգացմունքներն էլ կրիտիկայի են-

թարկել։ Իսկ այժմ տեսնում եմ, որ այդ համարձակութիւնիցս ոչինչ բան դուրս չի եկել։ Միւս կողմից՝ այնքան հիանալի է իմ երկարաթերթերունք «փռքը իկ զաւանանքը»։ Բոլորովին թուլանում եմ։ Այն չափից դուրս միտումը, որ զգում եմ դէպի նա, չի կարելի բացատրել միմիայն բնական ընտրողութեան զօրութեամբ։ Ոչ։ Իմ զգացածումն մի աւելի բան կայ, և մինչև անգամ զիտեմ թէ ինչ կայ։ Այդ այն է, որ նա ինձ սիրում է այնպիսի թարմ ու ազնիւ զգացմունքով, որով ինձ ոչ ոք չի սիրել։ Օ՛, որքան տարբեր է այդ վարժութեան ժամերից, որնց ժամանակ ես հարւածներ էի տալիս ու պաշտպանում էի հարւածներից։ Սաստիկ դուր եկող ու սաստիկ սիրող կինը, եթէ զիմացաւ, կարող է հաւասացած լինել որ ինքը կը յաղթի։ «Ծոլորած թոչունը», ինչպէս անւանում է Ալովացկին, անպատճառ յետ կը դառնայ նրա մօտ իրբեւ դէպի իւր հանգիստը, իրբե՛ իւր անդորրութիւնը, և այնքան աւելի շուտ կը վերադառնայ որքան աւելի միայնակ ու դառն զրութեան մէջ զգայ իրան։ Ոչ մի բան այնքան չի մեղմացնում, ոչ մի բան այնքան չի զրաւում տղամարդու սիրուը որքան այն, որ նա զգում է թէ իրան սիրում են։ Մի քիչ վերեւ ինչ ասես զրեցի լեհուհիների մասին, բայց եթէ մէկը մտածի, թէ վախենալով, որ ինձ մեղադրեն անհետեղութեան մէջ, ես չեմ անիլ այն, ինչ որ այս րոպէիս աւելի լաւ եմ համարում, — նա սաստիկ կը սխալւի։

Ասել չեմ կարող, թէ որ աստիճան բաւարարութիւն է տալիս այդ աղջիկը իմ արտիստական ճաշակին։ Պարահանդէսը վերջանալուց յետոյ հրաշալի րոպէ էր, երբ որ մենք հիւրերին ճանապարհ գնելուց յետոյ պատիրեցինք թէյ բերել մեծ դահլիճը ու չորսով նատեցինք խմելու։ Ես, ուզենալով տեսնել թէ ինչ են անում զրսեւո՞ւ, մօտեցայ պատուհանին ու մի քիչ յետ քաշեցի վարագոյքը։ Արդէն առաւտուան ժամի ութին էր. պատուհանի ապակիների միջով յանկարծ ներս թափանցեց արևի լոյսը, որ լամպի լոյսի առաջ այնպէս կապտագոյն երեսեց, որ ես զարմացաց։ Բայց աւելի ես ապշեցի, երբ որ Անելիկային տեսաց այդ լուսաւորութեան մէջ։ Աչքիս այնպէս թւաց, կարծես նա կապրի կղզու կապուտակ քարայրի մէջ լինէր։ Խնչ երանգներ (ՏՕԵՒ) էին խաղում նրա բաց ուսերի վրայ։ Եւ ինչ արած, Աստւած ինձ այնպէս է ստեղծել, ես այն աստիճան

ապաւորւող եմ, որ այդ բովէին ես վերջնականապէս թուլացայ և Անելկան զբանով այնպէս ընկճեց իմ սիրու, կարծես թէ այդ բանը նրա արժանաւորութիւնն էր: Երկար ժամանակ և բոլորովին ուրիշ տեսակ քան առաջ ես սեղմում էի նրա ձեռքը բարի գիշեր անելիս, իսկ նա, առանց յետ քաշելու ձեռքը, պատասխանեց:

—Բարի լոյս, բարի գիշեր չէ, բարի լոյս:

Սակայն բոլորովին կուրացել եմ ինչ է, թէ օրիորդի ձայնի երաժշտութիւնն ու աչքերն էին ասում:

—Սիրում եմ, սիրում:

Ես էլ՝ համարեա թէ:

Հօրաքոյրս նացելով մեզ վրայ հրճում է խուլ ձայնով ինքն իրան խօսելով: Աչքերումը արտասուք տեսար:

Գնում ենք Պլոշով:

Պլոշով, 5 փետրարիս

Ալդէն երկրորդ օրն է որ գիւղումն ենք: Նիանալի էր ճանապարհը: Պարզ եղանակ էր ու սաստիկ ցուրու: Զիւնը սահնակների տակին ճանուում էր ու շոշափում դաշտերում: Արեւ մայր մտնելիս՝ այդ ահագին սպիտակ հարթութիւնները բոլորովին մանուշակի գոյն ստացան: Պլոշովի մօտ լորիների մէջ բարձրաձայն կոկուալով թռչկոտում էին հարիւրաւոր ազւաներ: Զմեռը, մեր թունդ ձմեռը ունի սակայն իւր գեղեցկութիւնը: Նրանում մի տեսակ ոյժ ու վեհութիւն կայ և գլխաւորապէս շիտակւթիւն կայ: Խնչակս որ շիտակ բարեկամը առանց այլեալլութեան մարդուս երեսին ասում է ճշմարտութիւնը, այնպէս էլ մեր ձմեռը դաղում է մարդուս ականջները՝ առանց բան հարցնելու: Բայց դիա փոխարէն նա իւր արիութիւնը ներշշչում է մարդկանց: Մենք բոլորս ուրախ էինք, որ գիւղն ենք զնում: Բացի այդ՝ պառաւ տիկինները ուրախ էին, որ իրանց ներիրական բաղձանքները կատարելու վրայ են, ես ուրախ էի, որովհետեւ ուսս կպած էր կողքիս նատած Անելկայի ուսին, —նա էլ գուցէ նոյն պատճառով երջանիկ էր զգում իրան: Երկու անգամ նա կռանալով պաշեց հօրաքրոջս ձեռքը — այնպէս, սրտի չափազանց ուրախութիւնից: Նրան շատ էր սազում բրդուս բռան ու մորթէ զլիսարկը, որի ասկից հազիւ էին երեսում նրա թուխ, զեռ գրեթէ մանկական

աչքերն ու ցրտից կարմրատակած թշերը։ Զահէլութիւնը վրայիցը թափում է։

Լաւ է Պլոշզվում ու խաղաղ։ Սիրում եմ մանաւանդ հինաւուրց ահագին բովսարիները։ Հօրաքոյրս անտառները աչքի լոյսի պէս է պահում, բայց ցախ չի խնացում, այնպէս որ աւաւոտից մինչև երեկոյ բուխարիները վառում են։ Կրակը գոգուում, ճտճտում է ու ուրախ մոքեր է բերում մարդուս վրայ։ Երեկ ճաշից յստոյ ամբողջ ժամանակը նառած էինք կրակի առաջ։ Շատ բան պատմեցի Հռոմի ու այնտեղի հնութիւնների մասին, և ինձ այնպէս երկիրածութեամբ էին ականջ գնում, որ մինչև անդամ ինքս ինձ ծիծաղելի էի երեւում։ Հօրաքոյրս իմ պատմելու ժամանակ աչքերը Անելկայից չի հեռացնում, դիտելով մինչև անդամ մի քիչ խստութեամբ, թէ նրա դէմքը արտայացում է արդեօք պէտք եղած հրճւանքը։ Սակայն նրա դէմքի արտայացուած հրճւանքը մինչև անդամ չափազանց է։ Երեկ Անելկան ասաց ինձ։

—Մի ուրիշ մարդ կարող էր այնտեղ անց կացնել ամբողջ կեանքը ու չը նկատել քո տեսած հրաշալիքների կէսն անդամ։

Հօրաքոյրս իսկոյն վրայ բերեց դոգմատիկական հանդսատութեամբ։

—Ես էլ միշտ հէնց այդ եմ ասել։

Լաւ է, որ այստեղ ինձ նման մի ուրիշ սկեսուիկ չը կայ, թէ չէ նրա ներկայութիւնը ինձ նեղ դրութեան մէջ կը գցէր։

Մի քիչ բացառութիւն է կազմում մեր մէջ Անելկայի մայրը։ Նա այնքան բան է քաշել կեանքումը, այնքան հոգսեր է ունեցել, որ ուրախութիւնը նրա սրտից ընդ միշտ հեռացել է։ Նա վախենում է ամեն աեսակ ապագայից և անդիտակցարար կասկածում է, որ մինչև անդամ յաջողութեան տակ էլ թագնւած է մի որ և է որոգայթ։ Մարդու կենդանութեան ժամանակ շատ անբախտ է եղել յետոյ հազար ու մի նեղութիւն է քաշել իւր կարողութեան պատճառով, որ բաւական մեծ է, բայց վաստ վիճակի մէջ է։ Բացի այդ՝ գլխացաւից սկի աչք չի բաց անում։

Անելկան կարծես այն կանանց կարգին է պատկանում, որոնցից մեզնում աւելի շատ կան քան կարծւում է, և որոնց գլուխը երբէք չի ցաւ իլ տնտեսական ձախորդութիւնների պատճառով։

Այդ բանի համար շատ եմ հաւանում նրան, որովհետև այսպէս

թէ այնպէս՝ այդ ապացոյց է բարձր ձգտումների; Ասենք՝ այժմ նրա ամեն բանը ինձ գրաւում է; Խանդաղատանքը այնպէս արագ է աճում զգացական հակումների հողի վրայ ինչպէս խոտը տաք անձրևից յետոց; Այս առաւօտ սրահում տեսայ աղախնին Անելկայի շորերն ու ոտնամանները տանելիս և—մանաւանդ այդ ոտնամանները— ինձ այն աստիճան յուգեցին կարծես թէ նրանց տէր լինելն ու հագնելը Անելկայի բոլոր առաքինութիւնների թագն ու պատկն էր:

Ըսդհանրապէս մենք, տղամարդիկս, սաստիկ թոյլ ենք; Զեռքս զբել եմ երակազարկիս վրայ ու դիտում եմ զգաց հունքներիս այդ տենդի ընթացքը; Զարկը շատ արագ է:

Պլոշով, 8 կամ 9 փետրւարի.

Հօրաքոյր, արդէն սկսել է իւր սովորական պատերազմը պան Խւաստովսկու հետ; Այդ այնպիսի տարօրինակ սովորութիւն է, որ իսկապէս արժի այդ վէճերից մէկը նկարագրել; Հօրաքրոջս՝ լեզւակուր միանդամայն անհրաժեշտ է հէնց միայն ախորժակը բաց անելու համար, իսկ Խւաստովսկին, որ ի դէպ ասած հիանալի է կառավարում Պլոշով, բորակից ու ծծումբից բաղկացած շլեախտիչ է և ոչ ոքի թոյլ չի տալ, որ իւր էշն չոշ ասի, այդ պատճառով նրանց կուիւները սաստիկ կատաղութեան են հասնում; Արդէն սեղանատուն գալու. պէս նրանք սկսում են մէկ-մէկի վրայ չարագուշակ հայեացքներ զցել, —առաջին գնդակը սուպի ժամանակ հօրաքոյրս է արձակում, օրինակի համար՝ այսպէս սկսելով խօսակցութիւնը.

—Զեմ յիշում ինչքան ժամանակ է, պան Խւաստովսկի, որ ուզում եմ մի տեղեկութիւն ստանամ աշնանացանքսերի մասին, իսկ դուք կարծես զիտմամբ ինչի մասին ասես խօսում էք բայց դրա մասին մի խօսք էլ է չեք ասում:

—Պանի կոմսուհի, աշունքը լաւ էին ծլում, իսկ այժմ երկու կանգրուն ձիւն է նստել, ի՞նչ իմանամ ինչպէս է; Հօ ես Աստւած շեմ, որ իմանամ:

—Զուր աեղը, պան Խւաստովսկի, Աստծու անունը մի տւէք:

—Ես նրա տւած ձիւնի տակը չեմ աշխատում նայել, ուրեմն և նրան չեմ վիրաւորում:

—Որ այդպէս է, ուրեմն ես եմ վիրաւորում:

— Ի հարկէ:

— Անտանելի մարդ էք, պան Խւաստովսկի:

— Զէ, տանելի մարդ եմ, տանելի, որովհետև շատ բան եմ տանում:

Այդ կամ մի ուրիշ զրա նման ձեռվ վէճը տաքանում է: Շատ քիչ կը պատահի որ ճաշը անց կենայ առանց կծու խօսքերի: Ճաշի վերջին հօրաքոյրս լուսում է ու սկսում է զայրացած ուտել, կարծես ուղեղով ոխը կերակուրներից հանել: Խսկ որ՝ լաւ ախորժակ ունի: Բայց քանի ուսում է, տրամադրութիւնը գալիս է տեղը և հետզհետէ հիանալի է դառնում: Այժմ երբ ես ճաշից յետոյ թես տալիս եմ Անելկայի մօրը, հօրաքրոջս պան Խւաստովսկին է տալիս թերը և գնում ենք սև սուրճ խմելու. բոլորովին հաշո ու համաձայն: Հօրաքոյրս նրանից հարցնում է նրա որդիների մասին, նա էլ համբուրում է հօրաքրոջս ձեռները: Խսկապէս նրանք իրար սիրում ու յարգում են: Պան Խւաստովսկու որդիներին տեսել եմ այն ժամանակ, երբ նրանք գեռ համալսարանումն էին: Այժմ երեք նրանք կտրին տղերը են, բայց թունդ արմատական:

Անելկան սկզբում մի քիչ վախենում էր ճաշւան պատերազմից: Հասկացրեցի նրան բանի էութիւնը և այժմ, երբ որ վէճը սկսում է, նա երկայն թերթերունքների տակից զաղոտուկ նայում է ինձ, ժպտում է բերնի ջհակներով - և այդ ժամանակ այնպէս կերպարանք է ստանում, որ մարդ ուզում է նրան խժուի: Ոչ մի կին չեմ տեսել կեանքումն, որ այդպիսի կատարեալ ալէրաստրէ քոնքեր ունենայ ու այդպիսի երակներ քոնքերի վրայ:

12 Փետրւարի

Թէ զրսել թէ իմ մէջս իսկ և իսկ Յւիդիոսի կերպարանափօխութիւններն են կատարեել: Յուրատը նստել է, եղանակը վատացել է, եգիսլոտական խաւար է տիրում: Ոչ մի կերպ չեմ կարող այնպէս լաւ նկարագրել, թէ ինչ է կատարւում դրսել, ինչպէս եթէ առեմ, որ նեխած եղանակ է: Սակայն ինչ սարապիելի կլիմա է այստեղի կլիման: Հռոմում, ամենավատ եղանակներին, արեգակը էլի օրը մի տասը անգամ կ'երեւի. իսկ այստեղ ահա երկու օր է այնպէս է, որ քիչ է մնում ցերեկը ճրագ վառենք սենեակներում: Այդ

սե ու ծանր խոնաւութիւնը թափանցում է մարդուս մտքերի մէջ, սե գոյն է տալիս նրանց և միւնոյն ժամանակ ճնշում է: Խնձ վրաց հօ պարագիելի է ներդործում: Հօրաքոյրս ու Խւաստովսկին այսօր աւելի թունդ էին կռւում քան երբ և իցէ: Խւաստովսկին պնդում էր, թէ հօրաքոյրս թոյլ չը տալով, որ ծառերին ձեռք տան, փշացնում է անտառները, որովհետև հին ծառերը փառում են, իսկ հօրաքոյրս պատասխանում էր, թէ առանց իրան օգնութեան էլ բաւական ծառեր են կտրատում մեր անտառներից,—ևս պատառում եմ, թող անտառն էլ պառակի: Այդ ինձ ցիշեցնում է մի շեակատիչի, որ, մեծ կալած ունենալով ամենալաւ հողերում, մշակում էր միայն ամի հրացանի ասպարեզից շափ տեղ:

Բայց այդ շատ էլ հետաքրքիր բան չէ: Ակամայ սաստիկ տհաճութիւն պատճառեց ինձ Անելկայի մայրը: Այսօր ջերմանոցում նա սկսեց ինձ պատմել իսկ է մայրական, բայց անէսթետիկական պարծենկոծութեամբ, թէ ինչորէս ուղեցել է նշան դնել Անելկայի վրաց իւր ծանօթ Կրոմիցկին: Ինձ վրաց այդ այնպէս ազգեց ոնց որ մէկը մատիցս փուշ հանէր պատառաքաղի ատամով: Այնպէս ինչպէս այն կապուտակ լոյսը գորովս շարժեց դէպի Անելկան, թէև նրա արժանաւորութիւնը չէր, այնպէս էլ Կրոմիցկու մօտ—մօտ անելը սառցրեց սիրաս դէպի նա, թէև նա մեղք չ'ունէր դրանում: Կրոմիցկուն, այդ կապիկին, մի քանի տարի է ճանաչում եմ ու սկի չեմ սիրում: Ծագումով նա աւտորիական Սիլեզիայիցն է, որտեղ մի ժամանակ կարծեմ Կրոմիցկիները ահազին աւատական կալւածներ են ունեցել Հւոմանում՝ նա պատմում էր, թէ իրանց տօհմը դեռ ԽՎ-րդ դարում կոմասկան տիտղոս է ունեցել,—և հիւրանոցներում Շկոմ ֆոն Կրոմիցկին էր գրել տալիս անունը: Եթէ բոված սուրճի երկու հատիկների նման սե ու պապղան փոքրիկ աչքերն ու նոյն գոյնի մազերը չը լինէին, նա կը նմանէր ճաշից մնացած պանրի կեղեից կտրած—շինած մարդու, որովհետև իսկ որ այդ տեսակ երեսի գոյն ունի: Բացի այդ՝ նա նման է մեռելի գանգի: Ես դէպի նա միանգամայն Փիզիկական զգւանք էի զգում: Խախկ, ինչքան այդ բանը աչքիցս զցեց Անելկային: Շատ լաւ գիտեմ, որ նա Կրոմիցկու տեղակ ու նրա դիտաւորութիւնների համար պատասխանառու լինել չի կարող, բայց այնուամենայնիւ այդ բանը իմ աչքիցս նրան սաստիկ զցեց:

Չեմ ի հանում, թէ, ինչու նրա մայրը այդպէս երկար ու բարակ պառումեց ինձ այդ բանի մասին, որովհետև եթէ դրանով ուզում էր ինձ շատապեցնել, նպատառին ս'ի չը հասաւ: Նա (աղանի Պ-ն) շատ մեծ արժանաւորութիւններ ունի, քանի որ կարողացել է դիմանալ հաղար ու մի հոգսերի ու գեռ դաստիարակել այդպիսի մի աղջիկ, բայց անշնորհք է ու ձանձրալի՝ իւր մշտական գլխացաւով ու մակարոնիզմներով¹⁾:

—Խռոտովանուում եմ—ասաց նա—ես նրա կողմն էի: Երբեմն ընկճում եմ հոգսերի բեռի տակ. ես այն կնիվներից եմ, որոնք գործերից գլուխ չեն հանում, իսկ եթէ մի քիչ սկսել եմ հասկանալ, այդ նրանից է, որ երեխայիս են վերաբերել, և այն էլ ինձ այնքան թանձ է նստել ալդ, որ ոյժ ու առողջութիւն չի մնացել մէջս: Կրոմիցին շատ աչքաբաց տղայ է: Ահազին գործեր ունի 0դեսասպում և ինչ-որ նաւթի կապալներ ունի ու սպեկուլացիաններ է անում Բաքւում, «զուս սայս-յե» (ես ինչ զիտեմ): Բայց նրան երեկի խանգարում է այն, որ այստեղի հաւատակ չէ: Ես էլ մտածում էի, որ եթէ նա պսակւէր, պարտքերից կ'ազատէր Անելկայի կալւածը և միւնոյն ժամանակ կ'աշխատէր հապատակութիւնը փոխել այդ կալւածին տէր դատնալու համար:

—Իսկ Անելկան,—հարցրեցի անհամբերութեամբ:

—Տեսնում էի, որ Անելկան շատ էլ չի սիրում նրան, բայց այդ ոչինչ, նա շատ բարի երեխաց է: Բացի այդ՝ իմ մահիցս յետոյ նա կը մնար առանց խնամառութեան, այնպէս որ...

Էլ հարց ու փորձ չարեցի, որովհետև չեմ կարող ասել թէ ինչպէս զայրացնում էր ինձ այդ և թէև հասկանում եմ, որ միմիայն Անելկայի շնորհիւ է որ պսակը գլուխ չի եկել, բայց էլի վասու է զալիս, որ նա թոյլ է տւել իւր վրայ նայել այդ զարշելի արարածին և մանաւանդ, որ կարողացել է մի վայրկեան իսկ տատանել:

Ինձ համար այդ՝ ջղերի իննդիր կը լինէր: Մոռանում եմ սակայն մի բան՝ այն է, որ ամեն մարդու ջղեր իմբս պէս չեն և որ կրոմիցին, չը նայած իւր շաքարի թղթի նման երեսին ու մեռելի

¹⁾ Մակարոնիզմ կը նշանակ՝ խօսակցութիւն կամ զրւածք՝ աղաւաղած լեզուի՝ մի քանի լեզուներից խառնուրդ.

գանդի նմանութեանը, կանանց կարծիքով չնորհքով մարդ է համարւում:

Տեսնեմ ինչ «աղքերաներ» է անում: Մոռացայ հարցնէի թէ հօվարշաւայումը չէ, թէև շատ հաւանական է որ Վարշաւայումը լինի, որովհետեւ կարծեմ ամեն ձմեռ զալիս է: Գալով նրա այդ գործերին, այսքանը միայն կ'ասեմ,— գուցէ երևելի գործեր են, բայց հաւատալս չի զալիս, որ հաստատ ու անզողղողդ հիմք ունենան: Ես սպեկուլեանտ չեմ և չեմ կարողանալ ոչ մի բորսայական գործ զլուխ բերել, բայց քիչ ու միչ այդ բաներից գլուխ հանում եմ: Բայցի այդ՝ շատ բան դիտող ու բաւական հեշտութեամբ եզրակացութիւններ դուրս բերող մարդ եմ: Ինչ ծածկեմ՝ ես հաւատ չունեմ մեր շեախտիչների (յեհ ազնւական) վրայ, որոնք իբր թէ սպեկուլեացիաների վերաբերմամբ հանճարեղ մարդիկ են: Վախենում եմ, որ Կրոմիցկու ճարպկութիւնը ժառանգական կամ բնատուր ընդունակութիւն չը լինի, այլ ջղալին ախտ (ներոց), որ այդ ուղղութիւնն է ստացել Շատ եմ տեսել այդ տեսակ օրինակներ: Մէկ էլ տեսար որտեղից որ է դուրս պրծաւ մի շեախտիչ—սպեկուլեանտ. երբեմն որատանում է մինչև անգամ, որ սկզբում կոյր բախտը կտրում է ու նա կարճ ժամանակում հարստութեան տէր է զառնում... Բայց սկի մէկին տեսած չկամ, որ մահից առաջ սնանկացած չը լինի:

Այդպիսի ընդունակութիւններ կամ ժառանգում են կամ ձեռք են բերում սկսած ա—բ—գ—ից: Խւաստովսկու տղերքը գուցէ յաջողութիւն ունենան, որովհետեւ նրանց հայրը պատահարար ունեցած չունեցածը կորցրել է և նրանք սկսում են այբ—բէնից: Բայց ով որ պատրաստ կարողութեան տէր լինելով և առանց առևտրական աւանդութիւնների, առանց մասնագիտական հմտութեան ընկնում է այդպիսի բաների յետելից—անպատճառ գլխի վրայ կը գայ: Ազնւական դասակարգի մէջ այդ, կրկնում եմ, դրամական ներոց է: Սպեկուլեացիան չի կարող յենել պատրանքների վրայ, իսկ թէ որքան պատրանքներ կան այդ ազնւականների սպեկուլեացիաների մէջ—Աստծուն է միայն յայտնի:

Սակայն ցանկանում եմ պան «Փօն Կրոմիցկուն» յաջողութիւն:

14 Փետրւարի:

Pax! pax! pax! (հաշտութիւն, խաղաղութիւն): Արդէն այն անախորժ տապաւորութիւնը անցել է: Բայց ի՞նչպէս ամեն բան զգում, հասկանում է Անելիան: Ուրախ էի ձեւնում, թէև սիրոս ուրախ չէր, իմ վարժունքիս մէջ դէպի նա հազիւ մի ամենաչնչին տարբերութեան նշով լինէր, բայց էլի նկատեց, զգաց: Այսօր ալրոմները նայելիս, երբ որ մենք մենակ մնացինք, ինչպէս՝ պէտք է ասած՝ յաճախ ենք մնում, որովհետեւ դիտմամբ մեզ չեն խանդարում, Անելիան սկսեց շփոթւել, այլայլւել: Խախոն հասկացայ, որ ուզում է ինձ մի բան առել և տատանուում ու վախենում է: Մի րոպէ մոռքովս մի ցնորամիտ բան անցաւ,—ինձ թւաց թէ նա ուզում է յայտնել, որ սիրում է ի՞նձ: Բայց իսկոյն յիշեցի, որ լեհունու հետ գործ ունեմ: Ամեն մի քոսոս լեհունի կամ, եթէ ուզում էք, ամեն մի թագունի, կը մեռնի ու առաջինը չի խոստովանիլ թէ սիրում է: Ողորմութիւն է, եթէ հարցնելուց յետոյ արտասանի՝ այսու: Բացի ազդ՝ Անելիան ինձ մոլորութիւնից հանեց, որովհետեւ յանկարծ ալբումը ծածկեց ու, շփոթութիւնից մի քիչ կմկմալով հարցրեց.

—Ի՞նչ է պատահել քեզ, Լէօն: Անպատճառ քեզ մի բան պատահել է, չէ:

Սակաեցի նրան հաւասարնել, որ ինձ ոչինչ չի պատահել, սկսեցի ծիծաղել ու հանգստացնել նրան, բայց նա զլուխ թափ տալով շարունակեց:

—Երկու օր է տեսնում եմ, որ քեզ մի բան պատահել է: Գիտեմ, որ քեզպէս մարդու սրտին մի ամենաչնչին բան անգամ կարող է դիմուել... և սկսեցի ինձ ու ինձ մտածել, հօ ես առիթ չեմ տւել, հօ այնպիսի մի բան չեմ ասել, բայց...

Այդտեղ նրա ձախնը մի քիչ դողաց, բայց նա նայեց իմ աչքիս մէջ:

—Ես քեզ ոչ մի վառ բան չեմ արել՝ չէ:

Մի րոպէ լեզւիս ծայրին պտտում էր՝ «Եթէ մի բանս պակաս է, այն է միացն, որ դու իմա չես, իմ ամենաքաղցր Անելիա», —բայց ահը, ինչպէս ասում է Հոմերը, մազերիցս բռնեց: Ահ ոչ թէ Անելիայից, այլ այն սողնակից, որ կարող էր ներքեւ դալ ու դուռը կող-

պել: Բայց էլի ձեռքը բռնեցի, համբուրեցի ու որքան կարող էի ուրախ ասացի.

—Դու ազնիւ ու քաղցր էակ ես, իսկ ինձ համար դարդ մի անիլ, որովհետև ինձ հետ ոչնչից-ոչինչ չի պահառիլ. բացի այդ՝ դու հիւր ես Պլոշվում և իմ պարտքս է հոգալ, որ դու լաւ զգաս քեզ այստեղ:

Այդտեղ նորից համբուրեցի նրա ձեռքը և այն էլ ոչ թէ մի ձեռքը, այլ այդ անգամին երկու ձեռն էլ Այդ բոլորը գեռ կարելի էր վայնաշարին ազգականական քաղաքավարութեանը վերագրել — և այնքան ողորմելի է մարդուս բնաւորութիւնը, որ այդ գիտակցութիւնը, այն դռնակը, որի յետեին այս դէպքում կարելի էր թագ կենալ, ինձ սիրտ էր տալիս: Այդ զգացմունքը ողորմելի եմ անւանում նրա համար, որ ինձ չի սպառնում ոչ մի ուրիշ պատասխանատութիւն, բացի այն որ ինքս իմ առաջ պէտք է պատասխանատու լինեմ, իսկ ինձ հօ չեմ խարելու Սակայն զգում եմ, որ մինչև անգամ իմ առաջս էլ պատասխանատու չեմ լինելու, որովհետև զգայարանքներս միշտ ինձ տարել են ուր որ կամեցել են, իսկ իմ յարաբերութիւններիս մէջ դէպի Անեկան բոլորովին զգայարանքներիս իշխանութեան տակ եմ գտնւում: Դեռ մինչև այժմ բերնում զգում եմ նրա ձեռքի քաղցր հպաւորութիւնը — և էլ ինչ առեմ՝ փափազս սահման չ'ունի: Վաղ թէ ուշ ես ինքս կը կողպեմ այն դռնակը, որով այսօր գեռ կարող էի փախչել դաշտը: Բայց իսկապէս կարող էի որ: Այսո, եթէ որ մի բան դրսեից ինձ օդիեր:

Այժմ բոլորովին ակներեւ է, որ նա սիրում է ինձ: Ամեն բան ինձ մզում է դէպի նա:

Այսօր ինքս ինձ այս տեսակ հարց տեսցի, — և թէ այդ անխուսափելի բան է, էլ ինչւ եմ այսօր — էզուց քցում:

Մտածեցի ու այսպիսի պատասխան գտաց, — և եմ ուզում մի չնչին բան էլ է կորցնել այն յուզմունքներից, այն գողահարութիւններից, այն տպաւորութիւններից, այն հոգեզմայլութիւնից, որով լիքն են կիսակատար խօսքերը, հարցական հայեացքները, ակնկալութիւնները: Ուզում եմ քրոմանաս մինչև վերջը տանել: Կանանց էի մեզադրում, թէ զգացմունքի արտայայտութեան ձևերը զգացմունքից բարձր են դասում, իսկ ինչպէս

երեսում է ինձ համար էլ նշանակութիւն ունի, որ այդ ձևերը բոլորը կատարեն: Ինչ արած՝ մարդս երբ որ հասակն առնում է, այդպիսի բաներն էլ են նրա համար նշանակութիւն ունենում: Նկատած եւ՛ նոյնպէս շատ անգամ, որ մենք, տղամարդիկս, եթէ որոշ աստիճանի նրբութեան են հասած լինում մեր ջղերը,—կանացի բնաւորութիւն ենք ունենում: Ես, բացի այդ, մի քիչ էլ էպիկուրեան եմ զգացմունքների նկատմամբ:

Վերեսում բերած խօսակցութիւնից յետոյ ես ու Անելիկան հիանալի տրամադրութեան մէջ ընկանք: Երեկոյեան ես օգնում էի նրան թղթից լուսամփոփներ կարտել, որովհետեւ այդ ժամանակ կարող էի կպչել նրա ձեռներին: Ես դիտմամբ խանգարում էի նրան բանելու ժամանակ. նա իրան երեխայութեան տւեց ու սկսեց երեխայի նման չարութիւններ անել, երբեմն-երբեմն դիմում էր հօրաքրոջս ասելով միակերպ ու արագ ձայնով՝ այնպէս ինչպէս զանգաւում են փոքրիկ աղջիկները:

—Մօրաքոյք, Աէօնը ինձ հանդիսատ չի թողնում:

(Կը շարունակուի)